ՀՐԱՄԱՆ

18 մարտի 2021 թվականի N ԱԿ 269 - Ա

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ- ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը և Դավիթ Լյուդվիկի Ղազարյանի 2021 թվականի մարտի 17-ի անձնական դիմումը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Դավիթ Լյուդվիկի Ղազարյանին 2021 թվականի մարտի 22-ին նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի պետ-տեսուչ (ծածկագիր՝ 66-28.4-Ղ5-2)՝ 12 ամիս փորձաշրջանով:

2. Դավիթ Լյուդվիկի Ղազարյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի պետ-տեսուչ (ծածկագիր՝ 66-28.1-Ղ5-2) Աստղիկ Բալասանյանին:

3. Դավիթ Լյուդվիկի Ղազարյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Recoverable Signature

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

Հ. ԱՎԱԳՅԱՆ

2021թ. Մարտի 18
Երևան

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107